

## ՔՆՆԾԴՌՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԸՑԵՆԾԽԾՈՒԹԻՒՆ

Յ. Յանանդեան եւ Հ. Անառեան «Հայոց նոր վկաներ» (1155—1743),  
Վաղարշապատ, 1903 թ., գլուխ է 3 բուգլի

Պ. Յ. Մանանդեանը այս գրքի յառաջաբանում հետևեալ  
խօսքերով է բնորոշում այդ գիտական հրատարակութեան նը-  
շանակութիւնը. «Ձեռնարկելով պ. Հրաչեայ Աճառեանի տոկուն  
և սիրայօժար աշխատակցութեամբ Հայոց նոր նահատակների  
վկայաբանութիւնների հրատարակման՝ իմ գլխաւոր նպատակն  
է եղել ծանօթանալ այնպիսի պատմական աղբիւրների, որոնց  
միջոցով հնարաւոր լիներ վաւերական փաստեր ունենալ Հայոց  
ներքին կեանքի մասին մահմէդականների տիրապետութեան  
շրջանում...» «Նախ և առաջ վկայաբանական այս հատուածները  
խիստ թանկագին նիւթ են Հայոց եկեղեցական պատմութեան  
համար և միանգամայն վստահելի աղբիւր են, որովհետև ժա-  
մանակակիցների ձեռքով են գրուած, իսկ միւս կողմից կա-  
րենոր են նաև քաղաքական-պատմական անցքերի և աշխարհա-  
գրական որոշ խնդիրների լուսաբանութեան և միջնադարեան  
հայերէնի ուսումնասիրութեան համար»: Պ. Յ. Մ. յառաջա-  
բանից բերած այդ տողերը միանգամայն պարզում են այդ  
հրատարակութեան նշանակութիւնը, որը աւելի ևս արժէքաւոր  
է դառնում, եթի ինկատի ենք առնում որ գիտական բարեխըլ-  
ճութեամբ և ճշութեամբ են կատարուած բազմաթիւ ձեռա-  
գրերի համեմատութիւնները և ծանօթութիւնները: Կարելի է  
ասել՝ էջմիածնում հրատարակուած գիտական գրքերի մէջ  
«Հայոց նոր վկանները» պէտք է բանի ամենապատկառելի տեղէ:  
Մասնագիտական լուրջ պատրաստութիւն ունեցող մարդկանց  
մի աշխատութիւն է այդ, որից կարող են օգտուել մեր լե-  
զուագէտները և պատմաբանները միանգամայն ապահով լի-  
նելով որ վերաստուգուած և ճշգրիտ աղբիւրներ ունեն իրանց  
ձեռքի տակ: